«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Աթենքը Պերիկլեության դարաշրջանում
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Աստղիկ Գրիգորյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ 9 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....……...……...3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Ժողովրդավարության ծաղկման նախադրյալները……...….....…….……5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Պերիկլեսյան դարաշրջանի պետական կառույցը …….....…...….8

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Աթենքի արտաքին և ներքին քաղաքականությունը Պերիկլեսի օրոք…….....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....……....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....…18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի հիմնական նպատակն է ներկայացնել այն վիթխարի դերը, որ ունեցել է ժողովրդավարությունը Աթենական հասարակության զարգացման ու կայացման գործում: Մեծ քաղաքական գործիչներ Սոլոնի, Կլիսթենեսի և Պերիկլեսի գործունեությունը սերտորեն կապված է Աթենքում ժողովրդավարության սկզբնավորման և ամրապնդման գործընթացի հետ:

«Պերիկլեյան դարաշրջանն» ուսումնասիրելիս արժեքավոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում Արիստոտելի «Աթենական պոլիտեա» և «Աթենական հասարակարգը» աշխատությունները, Հերոդոտոսի «Պատմություն», Թուկիդիդեսի «Պատմություն», Պլուտարքոսի «Զուգակշիռք» աշխատությունները, ինչպես նաև՝ Քսենոֆոնի, Պլատոնի, Աթենայոսի, Սոկրատեսի, Դիոդորոս Սիցիլիացու և այլ մեծանուն հեղինակների գործերը:

Աշխատանքը բաժանված է երեք գլուխների, որոնցից յուրաքանչյուրում հստակ անդրադարձ է կատարված բոլոր այն գործոններին, որոնք նախանշել են Աթենական ժողովրդավարության ծաղկման ընթացքը:

Հին Հունաստանի դասական շրջանի ամենահիասքանչ էջերից մեկը՝ «Պերիկլեյան դարաշրջանը», նշանավորեց աթենական հասարակության ծաղկումը, վերելքն ու անկումը: Մ.թ.ա. V դարում Աթենքում կատարված հսկայական նվաճումները եկող սերունդների համար բացահայտեցին մշակույթի նոր ձևեր[1]:

Շատ նշանավոր պատմիչների վկայությամբ Հունաստանը մ.թ.ա. V դարում շատ արագ տեմպերով հզորանում էր՝ վարելով խելամիտ արտաքին և ներքին քաղաքականություն:

Պերիկլեսն իր կառավարման ընթացքում հաճախ ուղղորդվում էր Աթենքի քաղաքական ու մշակութային կյանքի զարգացումը խթանող իր հանճարեղ ուսուցիչների խորհուրդներով, իհարկե նրանց թվում ամենաառաջինները մեծ փիլիսոփաներ Անաքսագորասն ու Պրոտագորասն էին, հետո հայտնի դրամատուրգ Սոֆոկլեսը, ճարտարապետ Ֆիդիասը, պատմաբան Հերոդոտը և այլոք[2]:

Մ.թ.ա. 444-429 թթ., տասնհինգ տարի անընդմեջ որպես առաջին ստրատեգոս երկիրը ղեկավարելով՝ Պերիկլեսը չի ընդօրինակում ուրիշ պետական կառույցների, այլ գերազանց օրինակ

1.Ф. Н. Арский, Перикл, М., 1971, с. 102

է ծառայում շատերի համար, դա իրական դեմոկրատիան էր՝ հիմնված քաղաքացիների մեծամասնության կարծիքի վրա[3]:

Թուկիդիդեսի կարծիքով «Օլիմպոսցին» իր կառավարման ողջ ընթացքում մնաց խելացի, ուժեղ ու հարգված առաջնորդ, որի գործունեության արտացոլքն է հետևյալ աֆորիզմը. «Մենք կարճ ժամանակում ստեղծեցինք, բայց ոչ կարճ ժամանակի համար»[4], և իրավ այդ կարճ ժամանակահատվածում նա հասցրեց հարյուրամյակներ պահանջող ծրագրեր կյանքի կոչել և ապահովել դրանց համար դարերի կյանք:

Պլատոնը նույնպես պնդում էր, որ աթենական գաղափարները հետագայում գրավելու են ողջ Եվրոպան[5]: Այդ դեմոկրատիան սկզբնական շրջանում հանճարեղ օրենսդիրների կողմից ձևավորված գաղափարախոսություն էր, իսկ ծաղկման շրջանում՝ կայուն պետական կառույց:

«Պերիկլեսյան ոսկեդարում» աթենացիները վերջապես գտնում են իրենց համար բաղձալի համընդհանուր ներդաշնակությունը, և այն տարածում նաև աթենական սոցիալ-քաղաքական կառույցներում: Նրանք դեռևս Սոլոնյան սահմանադրությամբ նախապատրաստվել էին հասարակական ինքնագործունեության կարևորագույն ձևին՝ համաժողովրդական պետությանը:

Առհասարակ Պերիկլեսի գործունեությունը հիմնավոր ստեղծագործական հասարակաշինություն էր, որի ընթացքում կյանքի կոչվեց ավելին, քան պահանջում էր ժամանակի հրամայականը:

2.Фукидид, Перикл, II, с. 37

3.О. Егер, Всемирная история. Век Перикла, Л., 1981, с. 6

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ժողովրդավարության ծաղկման նախադրյալները

Ժողովրդավարությունը աթենական պետական կառավարման համակարգում սերմանվեց «դեմոկրատիայի նախահայր» Սոլոնի կողմից (մ.թ.ա. VII դարի վերջին և VI դարի սկզբին): Պլուտարքոսի խոսքերով մ.թ.ա. 594թ. արքոնտ ընտրվելով՝ Սոլոնը իրավազոր էր հրաժարվել արքոնտների ավանդական երդումից ու վերացնել այն, ինչ գոյություն ուներ և որպես էսումնետոս՝ ստեղծել նորը:

Սոլոնյան սահմանադրությամբ ժողովրդավարության հետ սերմանվում են չափավորության, արդարադատության, այլասիրության և հասարակական ակտիվ դիրքորոշումների, սոցիալական վարքագծի և բարոյականության նոր տարրեր: Այսպիսով աթենացիները նախապատրաստվում էին «Պերիկլեսյան դարաշրջանին»: Այդ ժամանակ հունական ցանկացած քաղաքում աներկբա գերապատվությունը կտրվեր տիրանի ինքնակալությունից անցմանը դեմոկրատիային[6]:

Աթենական զորապետների հեղինակության մասին է խոսում այն, որ կղզային ու փոքրասիական հունական պոլիսների ներկայացուցիչները խնդրում էին իրենց վրա վերցնել հույների միացյալ ուժերի հրամանատարությունը[7]:

Աթենքի ծովային նախադուռ Սալամինի գրավումը աթենական դեմոսի հաղթանակն էր, և հատկապես կարևոր էր մեծ հաղթանակի բարոյական կողմը ծագումով էվպատրիդ Սոլոնի հեղինակության բարձրացման գործում: Սոլոնյան ծրագրով նախատեսվում էր վերակառուցել աթենական հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ սկսած քաղաքական ու տնտեսական հարաբերություններից, վերջացրած սոցիալական բարոյականությամբ:

Տնտեսական բարեփոխումներից առաջինը սեյսախտեիան էր, որով արգելվում էր պարտային ստրկությունը և վերացվում էին հարկերը: Գյուղատնտեսությունն աննախադեպ զարգացում էր ապրում, այդ ժամանակ տնտեսական հարաբերությունները Էգեյան ավազանի միջին և հարավային շրջանների առևտրաշատ կենտրոնների հետ բավականին ակտիվ էին: Դա իհարկե խթանում էր աթենական արհեստների, առևտրի, ծովագնացության զարգացմանը, որն էականորեն ամրապնդում էր դեմոսի տնտեսական հիմքերը: Սոլոնյան սահմանադրությամբ

4.Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, էջ 134:

5.Н. Н. Пикус, История древней Греции, М., 1970, с. 226

պարբերաբար գույքագրում էր նախատեսվում, հողային ռեֆորմների հետ մեկտեղ Սոլոնը վերափոխում է պետական-քաղաքական կյանքի աստիճանակարգային կառուցվածքը: Հին ավագանու խորհրդի՝ արեոպագոսի կողքին, այս բազմահմուտ այրը հիմնադրում է Չորս հարյուրի խորհուրդը, որի անդամներն ընտրվում էին ըստ ունեցվածքային ցենզի՝ յուրաքանչյուր համայնքից հարյուր մարդ: Սոցիալական բարեփոխումներ իրականացնելով՝ Սոլոնը պոլիսի ամբողջ բնակչությունը բաժանում է չորս ունեցվածքային խմբերի՝ ըստ տարեկան եկամուտի, որը չափվում էր գյուղատնտեսական մթերքով:

Այդ խմբերն էին՝ պենտակոսիոմեդիմնները, որոնց տարեկան եկամուտը կազմում է հինգ հարյուր մեդիմնոս, և նրանք կարող էին ընտրվել արքոնտներ և գանձապահներ: Տրիակոսիոմեդիմների եկամուտը կազմում էր երեք հարյուր մեդիմնոս ու նրանք կարող էին պահել մարտական նժույգ: Ձնգիտների տարեկան եկամուտը կազմում էր երկու հարյուր մեդիմնոս ու նրանք հաճախ ծառայում էին որպես հոպլիտներ: Իսկ թետերն այն աթենացիներն էին, որոնց տարեկան միջին եկամուտը երկու հարյուր մեդիմնոսից պակաս էր, ու նրանք միշտ չէ, որ ունեին սեփական տնտեսություն:

Բարձրագույն զինվորական և արքոնտների պաշտոնները կարող էին ստանալ միայն առաջին խմբի ներկայացուցիչները, երկրորդ խումբը ներկայացված էր հեծելազորում, երրորդ խումբը ծանրազեն հետևակում, իսկ չորրորդ խումբը թեթևազեն հետևակում:Բոլոր այս չորս խմբերի ներկայացուցիչները իրավունք ունեին մասնակցել Ժողովրդական ժողովում, Դատարանում, Սոլոնը առաջինն է մտցնում նաև ազատ կտակի սկզբունքը: Եթե քաղաքացին չուներ օրինական որդիներ, ապա նա իրավունք ուներ կտակելու իր ունեցվածքը ում որ ցանկանում էր, այլ ոչ թե թողնել իր տոհմի որևիցե անդամի, ինչպես դա լինում էր նախկինում: Այս օրենքով հաստատվում էր յուրաքանչյուրի իրավունքը ղեկավարել իր ունեցվածքը իր հայեցողությամբ, այլ ոչ թե տոհմի շահերին համապատասխան: Աթենական հասարակության դեմոկրատական խավերի շահերն էին արտահայտում պետական-կառավարման հաստատություններ՝ էկլեսիան, հելիայան և բուլեն:

Կլիսթենեսը, որպես մ.թ.ա VI դարի նշանավոր ժողովրդավար օրենսդիր Աթենքում, գլխավորել է Պիսիստրատիդների բռնապետության դեմ շարժումը և սպարտացիների օգնությամբ մ.թ.ա 510 թվականին տապալել տիրանիան: Աթենքում ժողովրդավարության նախահայրեր Ալկմեոնիդները կարողացան վերջնականապես տիրանիայի լուծը թոթափելուց հետո ժողովրդականացնելով հզորացնել երկիրը, իսկ այդ ժամանակ Աթենքում հզոր և գերակշռող դեր

ունեին Տիսանդրոսի որդի Իսագորասը, որը նույնիսկ այդ ժամանակ տիրանության պահպանման կողմնակիցն էր, և Ալկմեոնիդների ընտանիքից՝ Կլիսթենեսը[8], որը մ.թ.ա 509 թվականին անցկացրել է դեմոկրատական բարեփոխումներ, որոնք վերացրել են տոհմային կարգի վերջին մնացորդներն Աթենքում: Տոհմային չորս ֆիլայի փոխարեն նա ստեղծել է տաս նոր ֆիլա՝ տերիտորիալ սկզբունքով, որի հետևանքով զգալիորեն թուլացել է տոհմական ավագանու ազդեցությունը[9]: Մինչպերիկլեսյան բարեփոխումները պետք է գնահատել հետագա դեմոկրատական պոլիսի չափանիշների տեսանկյունից: Վարչական, տնտեսական, պաշտամունքային և քաղաքական սկզբնական միավորներ են դարձել դեմերը՝ գյուղական շրջանները: Ստեղծվել է տաս ստրատեգոսից կազմված կոլեգիա, որը գլխավորել է աթենական զորքը:

Դեմոկրատիայի հակառակորդների և բռնապետություն հաստատելու փորձերի դեմ պայքարելու համար նա մտցրել է օստրակիզմ: Կլիսթենեսի բարեփոխումներն ամրապնդել են աթենական դեմոսի հաղթանակը տոհմական արիստոկրատիայի նկատմամբ: Ակնհայտ արմատական ռեֆորմներով Կլիսթենեսը կարողացել է ստեղծել ժողովրդավարական մի կառույց, որն աննախադեպ էր, և անցյալում իր նմանը չուներ[10]:

Արիստոտելի <<Աթենական պոլիտեա>> հռչակավոր աշխատության էջերում մենք գտնում ենք դասական շրջանի Աթենքի պետական կառուցվածքի հիմնավոր նկարագիրը, որի հիմնական բաղկացուցիչը դեմոկրատիան է:

6.И. Е. Суриков, Перикл и Алкмеониды, М., 2008, с. 4.

7.Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Եր. ,1986, էջ 312:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պերիկլեսյան դարաշրջանի պետական կառույցը

Աթենական ժողովրդավարությունը որպես պետական կաառույց որևէ երկրի հաջող քաղաքականության ընդօրինակում չէր, այլ օրինակ էր շատ շատերի համար: Այդ դեմոկրատիան նույնիսկ իր ընդդիմախոսների կողմից էր ճանաչվում, մ.թ.ա. 420թ. նրանցից մեկը խոստովանում է, որ Աթենքի քաղաքական իշխանության համակարգի <<սև նավը>> ընտրվեց և գնահատվեց գրեթե բոլոր աթենացիների կողմից[11]:

Անտիկ տնտեսությունը կրում էր սպառողական բնույթ, և դա այդպես էլ ընկալում էին իրենք՝ հին հույները: Դա պարզ երևում է, օրինակ, Պելոպոնեսյան պատերազմում ընկած մարտիկների թաղման ժամանակ Պերիկլեսի արտասանած ճառից[12]:

Աթենական առաջին ծովային միության գոյության ժամանակ սնանկացած ու իրենց հողաբաժինները կորցրած ատտիկյան շատ գյուղացիներ պետությունից ստանում էին կլերոսներ, դաշնակիցների հողերում կազմելով գյուղեր-կլերուքիաներ: Աթենական կլերուքիաների՝ դաշնակիցների հողերում աթենացիների այդ հենակետերի ռազմաքաղաքական նշանակությունից անկախ, դրանց առաջացումը կապված էր այն բանի հետ, որ անգամ տնտեսության ծաղկման շրջանում տնտեսապես զարգացած պոլիսում, ինչպիսին էր Աթենքը, արտադրողական ուժերի ըստ էության ցածր մակարդակը մշտապես պահանջում էր Աթենքից արտաբնակեցնել աղքատացած քաղաքացիներին: Օգտագործելով ծովային միության ղեկավարի իր դիրքը, Աթենքը գրավում էր դաշնակիցների տարածքի մի մասը, այնտեղ գաղութաբնակներ տեղավորելու համար: Այդ բոլորն իհարկե պետք է լուրջ ընդհարումներ առաջացնեին աթենացիների ու դաշնակիցների միջև: Հունաստանում ոսկու պաշարներ գրեթե չկային, և հույներն այն բերում էին Տասոս կղզուց, որը գտնվում է Մակեդոնիայում: Փոխարենը հույները շատ պղինձ ունեին, հատկապես Խալքիդա քաղաքում, որի անունը առաջացել է հենց հունարեն պղինձ բառից: Հունաստանում արդյունահանվում էին նաև մի շարք այլ գունավոր մետաղներ: Աթենքում լեռնահանքային արդյունահանությունը զարգացվածության բարձր մակարդակի վրա էր: Այնտեղ արտասովոր վարպետությամբ կարողանում էին թանկարժեք մետաղների նորանոր հանքավայրեր գտնել,

---

8.И. Е. Суриков, Солнце Эллады, М., 2008, с. 145.

հանքերի խորությունը հասնում էր ավելի քան 120 մետրի: Այդ ժամանակաշրջանում կառուցվում են ճարտարապետության և քանդակագործության աննկարագրելի հուշարձաններ: Տնտեսապես հետամնաց շրջաններում՝ Պելոպոնեսի մեծ մասում, Միջին Հունաստանի հյուսիսում՝ Էտոլիայում, հյուսիսային Հունաստանի արևելքում՝ Թեսալիայում ևս հողի հիմնական մասը շարունակում էր մնալ ավագանու ձեռքում: Այստեղ մանր հողատերերը գտնվում էին ավել կամ պակաս կախման մեջ տեղական օլիգարխներից, որոնք օգտագործում էին նախնադարյան-համայնական նահապետական հարաբերությունների վերապրուկները իրենց տիրապետությունն ամրապնդելու համար:

Պերիկլեսը ակտիվորեն ու հետևողական ձգտում էր մշտական եկամուտով ապահովել Ատտիկայի ազատ մարդկանց ու բարելավել նրանց սոցիալական դրությունը[13]:

Պելոպոնեսյան պատերազմի վերջում, Աթենական առաջին ծովային միության թուլացման ու տրոհման շրջանում, կլերուքների ճնշող մասը պետք է վերադառնար Ատտիկա՝ ավելացնելով սակավահող ու հողազուրկ քաղաքացիների թիվը: Կորնթոսում, Ատտիկայում, Մեգարայում և Հունաստանի այլ զարգացած կենտրոններում արհեստավորական արտադրությունն ավելի է կատարելագործվում: Իսկ արտադրության պարզ, հիմնականում ձեռքի գործիքները՝ դանակներ, մանգաղներ և այլն, կամ կենդանիների մկանային ուժով գործարկվող գործիքները՝ գութանների խոփերը, արտադրվում էին ըստ անհրաժեշտության, կամ որևէ դարբնոցի ու արհեստանոցի պատվերով: Արհեստանոցների և դրանցում տեղի ունեցող աշխատանքային պրոցեսների պատկերները պահպանվել են սկահակների վրա եղած նկարազարդումներում: Հունաստանում Աթենքի տնտեսական, քաղաքական ու սոցիալական գերիշխումը մ.թ.ա. V դարում հանգեցրեց Աթենական արծաթե դրամի՝ իբրև առավել ապահով վայրուտայի տարածմանը: Հունական պոլիսների մեծ մասը հոժարակամ ընդունում էր աթենական դրամները: Աթենքը պարտադրեց Աթենական Առաջին ծովային միության անդամներին տեղական դրամի հետ համահավասար ընդունել աթենական «բուերին»: Հույներն այդպես էին կրճատ անվանում աթենական դրամները, որոնց երեսի մի կողմում պատկերված էր աստվածուհի Աթենասի գլուխը, իսկ հակառակ կողմում՝ բուն: Իսկ ընդհանրապես, քանի որ հունական պոլիսները միշտ ձգտում էին թողարկել սեփական դրամ, ապա շրջանառության մեջ մշտապես գտնվում էին դրամահատման տարբեր տեսակների պատկանող ու տարբեր կշիռներ ունեցող դրամներ: Վաճառականները գալով մի որևէ պոլիս, ստիպված էին իրենց մոտ եղած դրամը փոխանակել տեղական դրամի հետ: Դրա հիման վրա

9.И. Е. Суриков, История афинскяй демократии, М., 2008, с. 144.

ծագեց դրամափոխների զբաղմունքը, դրամափոխները լավատեղյակ էին տարբեր համակարգերի դրամների արժեքների հարաբերակցությանը: Փականագործությունը, խառատագործությունը, կաշեգործությունն ու ձուլումը անմիջական կապ ունեին զենքի արտադրության հետ[14]: Դարբինները կռում էին սրեր, վարպետները հղկում ու զարդարում էին դրանք, կաշեգործները պատրաստում էին վահաններ, իսկ ատաղձագործ արհեստավորները՝ սայլեր ու կենցաղային զանազան առարկաներ: Վերջիններս սերտորեն կապված էին նաև ռազմական ու առևտրական նավաշինության հետ, որովհետև այդ ժամանակ արդեն շրջանառության մեջ էին դրվել աթենական արծաթե դրամները:

10.M. D. Dixon, Late Classical and Early Hellenistic Corinth, R., 2013, p. 44.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Աթենքի արտաքին և ներքին քաղաքականությունը Պերիկլեսի օրոք

Աթենքի արտաքին քաղաքականության ասպարեզում գլխավոր խնդիրը նրա քաղաքական ու տնտեսական ազդեցության ոլորտի ընդարձակումն էր: Բուն Հունաստանում Աթենքը ձգտում էր հեգեմոնիայի հասնել և ճնշել իր գլխավոր առևտրական մրցակիցներին: Դրա համար աթենացիները գործադրում էին բազմիցս մշակված ռազմական ու դիվանագիտական միջոցներ:

Պերիկլեսը իր ուժեղ բարոյական արժանապատվությամբ և խելքով հասել էր շատ բարձր աստիճանների, և ազատ ղեկավարում էր հանրությունը, և ոչ միայն առաջնորդում էր, որքան առաջնորդվում էր ժողովրդի կարծիքով: Նա իշխանությունը ստացել էր առանց անազնիվ միջոցների դիմելու, և հետևաբար արժանի էր մեծագույն հարգանքի հանրության կողմից: Այսպես Պերիկլեսը երբ տեսնում էր, որ աթենացիները չեն ենթարկվում՝ իր թավ խոսքերով վախեցնում էր նրանց, և ընդհակառակը տեսնելով իր հարազատ աթենացիներին կոտրված՝ ոգեշնչում էր նրանց քաջություն: Ըստ Արիստոտելի, դա էր հենց ամենաժողովրդավարական հասարակարգի յուրօրինակ նմուշը: Ազատության և բարեկեցության միջավայրում Պերիկլեսյան Աթենքը դառնում է արվեստների և գիտության նշանավոր կենտրոն[15]: Այստեղ ապրում ու ստեղծագործում էին շատ նշանավոր պատմագիրներ, բանաստեղծներ, իմաստասերներ, թատերագիրներ, ճարտարապետներ, նկարիչներ, քանդակագործներ: Պերիկլեսն իր բախտը վաղ էր կապել աթենական ժողավրդավարության հետ:

Պերիկլեսին է վերագրվում Աթենքում մեծ զարգացում նախատեսող դարաշրջանի հիմնադրի դերը, երբ Արիստոտելի բնորոշմամբ սկսում է իշխել ժողովուրդը (ամբոխը) և նշանավոր ծագում ունեցող մարդիկ դուրս են մղվում կառավարման գործին մասնակցելուց, պաշտոններ նշանակելիս էլ որոշիչ դերը պատկանում էր վիճակահանությանը:

Պերիկլեսի ժամանակակիցները ընդգծում են, որ առաջնորդի նշանավոր դիրքը աթենական զարգացած պոլիսի ժողովրդավարության ռեժիմի հիմնարար սկզբունք է, որ Պերիկլեսը երեսուն տարի իշխանության ղեկին մնալով և տասնհինգ անգամ անընդմեջ կառավարության գլխավոր

վարչության ստրատեգոս ընտրվելով իշխանությունը կառավարում է իրեն բնորոշ ներդաշնակ խելամտությամբ: Թուկիդիդեսնը ճիշտ գնահատելով Աթենքի ողջ քաղաքական ռեժիմը Պերիկլեսի օրոք, նշել է, որ իշխանությունն իրականում պատկանում էր առաջին քաղաքացուն, բայց դա անունով ժողովրդավարություն էր:

Պերիկլեսի հրապարակախոսություններից կարող ենք պատկերացնել Աթենական ժողովրդավարության իրական բնույթը: Պերիկլեսն ամեն տարի դեմոսին իր ամբողջ գործունեության հաշվետվությունը էր ներկայացնում, իսկ թե այն ինչ-որ պատճառով անբավարար էր ճանաչվում, ապա մեղավորները խստագույն պատժի էին արժանանում: Կյանքի վերջին տարիներին էլ Պերիկլեսը ընդդիմադիր էր Պիրեյա արմատական ժողովրդավարություն կուսակցության ղեկավար Կլեոնին և նրա իրավահաջորդներին: Պերիկլեսը որպես անձնուրաց հյրենասեր քաղաքական գործիչ ու հրամանատար պահանջում էր հանձնել հողը, գույքն ու հարստությունը հանուն հայրենիքի, և Սպարտայի դեմ պատերազմն ավարտել հաղթանակով, բայց և այնպես նրա իրավահաջորդները ձախողվում են չկարողանալով գոնե նմանակել հանճարին, քանզի պատերազմը չի կարող հասկանալ զուտ ռացիոնալ պարտավորություններ, և հաղթելն էլ հարաբերական է, քանզի հաղթող հերոսներին կարող է պարտության մատնել ժանտախտը, ինչպես՝ Պերիկլեսին: Մ.թ.ա. 450-ական թթ. աթենական դեմոկրատիայի կարևոր միջոցառումը եղավ անօրինականության դեմ բողոքը՝ գրաֆե պարանոմոն, այն որպես հաստատության սահմանում կոչված էր պաշտպանելու դեռևս չգրված աթենական սահմանադրության հիմնական սկզբունքները: Յուրաքանչյուր քաղաքացի ուներ գրաֆե պարանոմոնի իրավունք, այսինքն կարող էր բողոքարկել ժողովրդական ժողովով մտցված ցանկացած առաջարկ կամ որոշում: Գրաֆե պարանոմոնի քողի տակ իրագործվեցին արեոպագոսից ժողովրդական ժողովին ու դատարանին անցած օրենքների և պետության պաշտպանի հսկիչ ֆունկցիաները: Այն մեծապես օգնեց դեմոկրտական սահմանադրության ընդունմանը և իր արձագանքը գտավ մ.թ.ա. 458թ. Մեծ Դիոնիսիականների կրոնական տոնի ժամանակ: Այդ ժամանակաշրջանում աթենական մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ կային շատ ընդհանրություններ Սպարտայի հետ: Եվ պատահական չէ, որ առաջին անգամ հենց աթենացիների հանճարեղ գլուխներում ծնվեց անձնվիրաբար հայրենիքին ծառայելու գաղափարախոսությունը, և աթենացիների մոտ բյուրեղյա պարզությամբ և շատ հստակ այն դրսևորվեց: Այդ մարզերում անտիկ հասատակության բնական հիմքը՝ ստրկությունն ու հողատիրությունը դեռևս պարզունակ էր, և դա իր կնիքը պիտի դներ ամբողջ հասարակարգի վրա:

Կրետեյի, Թեսալիայի ու Բեովտիայի Փեստոս, Կնոսոս, Գորտին, Ելեփտերնա քաղաքները հատում էին սեփական դրամ արծաթից ու պղնձից՝ ըստ էգինյան կշռային համակարգի: Դա վկայում է այդ քաղաքների ներքին ու արտաքին զգալի առևտրական կապերի մասին: Կրետեի սոցիալ-տնտեսական կարգերում դեռ արխայիկ գծեր էին պահպանվում ազատ քաղաքացիները մտնում էին մի քանի, ինչպես դորիական, այնպես էլ ոչ դորիական ֆիլաների մեջ: Ֆիլաները պահպանում էին իրենց տնտեսական, վարչական ու ռազմական նշանակությունն ու բաժանվում էին հետերիաների, որոնք կազմված էին առանձին տոհմերից, Կրետական պոլիսներում կային մեծ թվով աղքատացած ու քաղաքական իրավունքները կորցրած քաղաքացիներ, ոչ կրետացիներ կամ ազատ արձակվածներ՝ ապետայրաներ: Մեծ դեր էր խաղում ռազմատոհմային միավորումը՝ ստրատոսը, որը կազմված էր զինվորական ծառայություն կրելու ընդունակ քաղաքացիներից:

Մինչև մ.թ.ա. IV դ. Թեսալիայի քաղաքական կառուցվածքը օլիգարխիական էր, մինչև նրա վերջնական դեմոկրատացվելը Պերիկլեսյան մեթոդներով: Աթենական օլիգարխիայի պայմաններում իշխանությունը գտնվում է հարուստ ու ծագման ազնվությամբ աչքի ընկնող անձանց ձեռքում, որոնք կազմում էին փոքրամասնություն: Թեսալիայում գոյություն ուներ հատուկ պաշտոն՝ էտագոս, որը քաղաքների միության կառավարիչն էր, ռազմական առաջնորդի լիազորություններով:

Բեովտիան ի տարբերություն Կրետեյի ու Թեսալիայի միութենական պետություն էր, որը ստեղծված էր ֆեդերացիայի հիմունքներով: Այդ ֆեդերացիան նախատեսում էր նրա կազմի մեջ մտնող պոլիսների ձևական իրավահավասարությունը: Միության մեջ էին մարզի բոլոր խոշոր քաղաքները՝ Օրքոմենոսը, Տանագրան, Օրոպոսը, Թեսպիան, Պլատեան և Թեբեն, վերջինս տնտեսապես ամենահզորն էր: Պելոպոնեսյան պատերազմի պատմության և Պերիկլեսի, Նիկիասի, Ալքիբիադեսի, Լիսանդրոսի կենսագրական աղբյուրներն այդ ժամանակի անցքերի ականատեսներ Թուկիդիդեսի ու Քսենեֆոնի պատմական աշխատություններն են: Թուկիդիդեսը նկարագրել է Պելոպոնեսյան պատերազմը մինչև մ.թ.ա. 410թ., իսկ Քսենեֆոնը նրան շարունակել է: Արդեն գիտենք, որ աթենացիներն ու սպարտացիները պատրաստվում էին պատերազմը վերսկսել ավելի մեծ ծավալով: Աթենքում Պերիկլեսի առաջարկությամբ ավարտվում է Աթենքը նրա ծովային նավահանգիստ Պիրևսի հետ միացնող երկար պարիսպների շինարարությունը: Պատի երկարությունը Աթենքի և Պիրևսի միջև կազմում էր յոթ կիլոմետր, իսկ ամրությունների ամբողջ գծի երկարությունը քսանվեց կիլոմետր էր, այն ներառում էր Աթենքը, Պիրևսն ու Փալերոն գյուղը, որը յուրօրինակ ապաստարան էր դարձել Ատտիկայի բնակչության համար: Ցամաքային

պաշարումը սարսափելի չէր աթենացիների համար, քանզի ունենալով ուժեղագույն մարտական նավատորմիդ, նրանք հեշտությամբ կարող էին բերել մթերքներ և հումք, պահպանել հսկողությունը դաշնակիցների վրա ու հակառակորդին հարվածել ծովից[16]: Պերիկլեսի առաջարկությամբ՝ Աթենքը Պիրևսի հետ միացնող պարսպի երկայնքով, նրա ներսի կողմեց կառուցվում է երկրորդ պարիսպն ու դրանով բերդ-միջանցքի մեջ է վերցվում պիրևսյան ճանապարհը: Ժամանակակիցներից մեկի կարծիքով աթենացիները եթե նույնիսկ ապրեին մեկուսի ու հեռավոր կղզու վրա, վատանգավոր հարձակումներից կապահովվեին այնքան ժամանակ, մինչև որ իրենց միջից մի խումբ մարդիկ նորից կդավաճանեին իրենց երկիրը և դարպասները բաց կաներն թշնամու առաջ: Մ.թ.ա. 435 թ., Էպիդամնոս քաղաքում պայքար է բռնկվում արիստոկրատների և դեմոկրատների միջև: Հակառակորդ կողմերը դիմում են Կերկիրային ու Կորնթոսին, որոնք սկզբում միջամտում են Էպիդամնոսի ներկայացուցչական պայքարին, հետո ընդհարվում իրար հետ: Առաջին ծովային մարտը շահում է կերկիրյան նավատորմը, իսկ կորնթացիները սկսում են հարձակման նախապատրաստվել: Ահաբեկված կերկիրացիները դեսպանություն են ուղարկում Աթենք, խնդրելով ընդունել իրենց աթենական ծովային միության մեջ և ռազմական օգնություն ցույց տալ: Այդ ժամանակ Աթենք են գալիս նաև Կորնթոսի ներկայացուցիչները, որոնք մատնանշում էին, որ Կերկիրիային Աթենական միության մեջ ընդունելը Կորնթոսի կողմից կդիտվի որպես մ.թ.ա. 445թ. հաշտության պայմանագրի խախտում: Այդ հարցի քննարկման ժամանակ աթենական ժողովրդական ժողովում եղած տատանումներին վերջ է դնում Պերիկլեսի ելույթը: Ըստ Թուկիդիդեսի Պերիկլեսը նշում է Սպարտայի ու Պելոպոնեսյան միության հետ նոր ընդհարման անխուսափելիությունը, ինչպես և ուժեղ ռազմական նավատորմիդ ունեցող Կերկիրայի հետ դաշինքի կարևորությունը: Աթենացիները Կերկիրայի ափերի մոտ են ուղարկում օժանդակ նավախումբ, և հետ մղում կորնթոսյան նավատորմին: Սպարտայում կայացած Պելոպոնեսյան միության անդամների խորհրդակցությունում, Մեգարան ու Կորնթոսը բողոք են ներկայացնում աթենացիների դեմ ու ստանում սպարտական կողմնակիցների օժանդակությունը: Սակայն սպարտացիները իսկույն չեն հարձակվում աթենացիների վրա, այլ պարերազմը սկսելու պատասխանատվությունը իրենց վրայից հանելու համար, Աթենք են ուղարկում դեսպաններ, որոնք պահանջում են վերացնել

մեգարյան պսեֆիսման, տրամադրել դաշնակիցներին Աթենական ծովային միությունից ազատ դուրս գալու իրավունք, ու քողարկված ձևով՝ արտաքսել Պերիկլեսին: Աթենական ժողովրդական ժողովը մերժում է նրանց պահանջը և սկսվում է պատերազմը, որը ընդհատումներով շարունակվում է մ.թ.ա. 431թ. մինչև 404թ.:

Պերիկլեսը, ելնելով եղած ուժերից ու միջոցներից կազմում է պատերազմի յուրատեսակ մի ծրագիր: Նա առաջարկում է աթենական ստրատեգոսներին խուսափել ցամաքային ռազմական ընդհարումներից, գտնելով, որ ծովափն օղակելու ու ավերելու միջոցով սպարտացիներին կստիպեն հաշտություն կնքել: Այդ ընթացքում Պերիկլեսը մեծ դժվարությամբ է կարողանում համաքաղաքացիներին համոզել դուրս չգալ Աթենքի ամրություններից: Պելոպոնեսցիների հեռանալուց հետո Պերիկլեսը մի քանի նավախմբեր է ուղարկում, թշնամու տարածքի ծովափնյա մարզերն ավերելու ու Մեգարան կողոպտելու համար: Պերիկլեսը որպես նուրբ դիվանագետ քաջ գիտակցում էր Աթենքի հասարակության ամենաառաջավոր մասի ու լայն դեմոկրատական խավերի կենսական շահերն ու կարիքները, և հույս ուներ, որ տնտեսապես հետամնաց Սպարտան ու նրա դաշնակիցները շուտով կսպառեն իրենց ուժերն ու ստիպված կլինեն հաշտություն խնդրել: Մ.թ.ա. 430թ., երբ պելոպոնեսյան զորքերը Արքիդամոսի գլխավորությամբ նորից Ատտիկա են ներխուժում, այնտեղ ժանտախտի համաճարակ էր բռնկվել: Պերիկլեսի դեմ ուղղված վրդովմունք է առաջանում, քանի որ շարքային աթենացիները Պերիկլեսին համարում էին պատերազմածին բոլոր աղետների գլխավոր մեղավորներից և առաջին անգամ նրան ստրատեգոս չեն ընտրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրությունն ավարտելով և ի մի բերելով վերոգրյալը՝ արձանագրենք, որ «Պերիկլեսյան դարաշրջանում» Աթենքը նախանշեց մեծ վերելք և ծանր դժվարությունների գնով այնտեղ եղավ ձևավորված սոցիալական, իրավական ու տնտեսական նոր իրողությունների և բացարձակ քաղաքական իշխանության համադրում: Աշխատանքի գլուխներն հետևողականորեն արտացոլում են Աթենական դեմոկրատիայի զարգացման ողջ շրջանը, և լույս են սփռում մեր առջև դրված հիմնական խնդիրների պարզաբանման վրա: Ներկայացվեց Աթենքի քաղաքական գործիչների՝ «ժողովրդական առաջնորդների» բարեփոխումներն ու նորամուծությունները միտված ամենակենսունակ պետական կառույցի՝ ժողովրդավարության վերելքին:

Աթենքի դասական շրջանի դեմոկրատիան տևել է գրեթե երկու դար, այն առավել ամբողջական ու զարգացած էր, առավել կայուն ու ամուր ու անհերքելիորեն ամենամեծ ազդեցությունը թողեց հետագա մարդկության պատմության վրա: Այլ կերպ ասած դարաշրջանի աթենական ժողովրդավարությունը, թեկուզ միայն գաղափարախոսություն, անկասկած Աթենքի քաղաքական կարևորագույն ձեռքբերումներից մեկն է: Այդ ժողովրդավարությունը, որ առաջացել էր պոլիսային միջավայրում, տարբերվում էր ժամանակակից ժողովրդավարությունից, այլ կեպ ասած խմբային քաղաքացիները ի դեմս ժողովրդական ժողովի իրականացնում էին գերագույն իշխանությունը ավելի իրական ու մշտական: Թեմայի ուսումնասիրությունն արդիական է, քանզի նույնիսկ այսօր է անհնարին մի այնպիսի գաղափարախոսության ստեղծումը, որը մեծամասնության շահերն արտահայտի և այնքան զարգանա, որ վերածվի պետական կառույցի: Այն ժամանակ չէր գործում ոչ մի խորհրդարան, և կարևորվում էր Աթենքի քաղաքացիների անմիջական ներգրավվածությունը, պետական գործերը վերահսկվում էին աթենական համաժողովրդական հավաքների կողմից: Դեմոկրատիայում չափազանց կարևոր սկզբունք էր օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասարությունը՝ իսոնոմիան: Թուկիդիդեսը Պերիկլեսյան Աթենքի պետական ապարատն իր մոդելով իդեալական էր համարում, չնայած այդ ժամանակ դեռ գերակշռում էր արիստոկրատիայի ոգին: Պերիկլեսին հաջողվեց ժողովրդավարությամբ փոխել բռնությունը և հեղափոխական ուղին և դրանով իսկ նպաստել անարխիայի վերափոխմանը: Խելամտորեն քննելով նախորդ բոլոր «ժողովրդական առաջնորդների» կատարած նորարարությունները և փաստերն արձանագրելով՝ Պերկլեսը կանգնեց ժողովրդական շարժման

գլուխ, փորձելով այն առաջնորդել և որոշակի սահմաններում և նպաստավոր կարգով լիարժեք զարգացման համար օգտագործել իր ժողովրդի հոգևոր և նյութական ուժը, քանզի բնությունն էր կարծես աթենացիներին այնպես ստեղծել, որ նրանք մշտապես լինեին անհանգիստ, միևնույն ժամանակ հանգիստ չտալով ուրիշներին: Պերիկլեսին առավելապես մտահոգում էր Աթենքի ռազմական հզորությունը, և նա հաճախ էր խոսում այն զինվորների մասին, ովքեր իրենց կյանքն էին զոհել հանուն հայրենիքի:

Այդ ժամանակաշրջանում Աթենքը «Պարզությամբ ամրագրված Գեղեցկություն» էր խորհրդանշում, աթենացիներն այնպիսի հանդուգն նորարարություններ էին ձեռնարկում, որոնք հստակ գերազանցում էր իրենց ուժն ու կարողությունները, բայց նրանք լավատեսորեն իրենց հույսը նույնիսկ ամենադժվարին պայմաններում չէին կորցնում: Պերիկլեսը լիովին համոզված կարող էր ասել, որ Աթենքի ապագան, ուժը, անվտանգությունը և վեհ իշխանությունը միահյուսված է ժողովրդավարության ապագայի հետ: Այդ բանաձևն արդյունք էր անցյալի թողած ժառանգության, և որի վերջնական հաղթանակը անխուսափելի անհրաժեշտություն էր, ու միայնակ կապահովեր ներքին կայունությունը, խաղաղությունն ու կարգուկանոնը՝ հող նախապատրաստելով Աթենքի լիակատար զարգացման համար: Դեմոկրատ քաղաքական գործիչների վերջնանպատակը ընդհանուր էր՝ քաղաքացիների բարվոքությունը:

Հիշեցնենք, որ պարսիկների դեմ աթենացիների տարած հաղթական ճակատամարտը վերջնականապես որոշեց Աթենքի հետագա քաղաքական կյանքի ուղին առանց սարսափելի, երկար ու արյունալի ցնցումների: Փորձվում էր ոչնչացնել նախորդ սերունդների աշխատանքը և ժողովրդավարությամբ փոխել բռնությունը և հեղափոխական ուղին, և դրանով իսկ նպաստեր անարխիայի վերափոխմանը ժողովրդավարության: Իսկ ինչ վերաբերում էր Պերիկեսի ներքին քաղաքականությանը, ապա այն իրենից ներկայացնում էր փոխադարձ վստահության վրա հիմնված կառավարման յուրօրինակ մեխանիզմ[17]:

Պերիկլեսյան Աթենքի ներքին կյանքի համակարգային վերափոխման և պետական կարգի արդիականացման ուղիները, ներքին վերափոխումները, շահավետ արտաքին քաղաքականությունն ու պատերազմները ծառայեցվեցին դեմոկրատիայի պետական կառույցի վերածվելու գերնպատակին[18]:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Սկզբնաղբյուրներ

1. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Եր. 1986.
2. Фукидид, История, Л., 1981.

Բ. Գիտական ուսումնասիրություններ

1. Арский Ф.Н., Перикл, М. 1971.
2. Бузескул В.П., История афинской демократии, П., 1923.
3. Dixon M. D., Late Classical and Early Hellenistic Corinth: 338-196 BC, Routledge, 2013.
4. Егер О., Всемирная история, Л., 1981.
5. Кнабе Г.С, Культура античности, М. 1998.
6. Пикус Н.Н., История древней Греции, М. 1970.
7. Суриков И. Е., Античная Греция, Солнце Эллады, М., 2008.